ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 ապրիլի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

51
(2717)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 172

Հերթական անգամ ականատես ենք լինում մի իրավիճակի, երբ 2018 թվականից հետո իշխանության եկած անձանց խոստումներն իրականություն չեն դառնում: Մասնավորապես, 2018 թվականի ապրիլից հետո իշխանություններն անընդհատ հայտարարում էին, թե հեղափոխության շնորհիվ կարողացել են այնպես անել, որ, օրինակ, արտագաղթը վերածվի ներգաղթի: Այս հանգամանքով հպարտանում էր նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Իրականությունը, սակայն, հեռու էր հպարտանալու համար հարմար լինելուց: Բանն այն է, որ «Փաստերի ստուգման հարթակ»-ը ուսումնասիրել է սահմանահատումների քանակը եւ արձանագրել՝ ինչպիսին է պատկերը հիմա:

Սկսած 2018 թվականից՝ իսկապես, սահմանային անցակետերով մուտքերի ու ելքերի տարբերությունը դրական է եղել, սակայն պատկերը հետագայում փոխվել է: 2021 թվականին Հայաստանից ՀՀ քաղաքացիների արտահոսքը վերջին 10 տարիների համար ռեկորդային էր: Մեկնած ու ժամանած ՀՀ քաղաքացիների տարբերությունը կազմեց -73,571 մարդ, իսկ ընդհանուր սահմանահատումների տարբերությունը՝ -43,874: Նախորդ՝ 2022 թվականին եւս բավական զգալի է երկիրը լքող Հայաստանի քաղաքացիների թիվը՝ -27,941 մարդ, փոխարենը ընդհանուր սահմանահատումների թիվը, ինչպես վերեւում նշեցինք, ռեկորդային դրական է՝ 38,732: Այսպիսով, փաստենք՝ վերջին տարիներին կրկին ավելացել է Հայաստանից արտագաղթողների թիվը:

Հայաստանի խորհրդարանում երեկվանից փոխվել է 33 տարի գործող ավանդույթը եւ փաստաշրջանառությունը: Սա տեղի է ունեցել այն բանից հետո, երբ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գլխավոր դատախազին ուղղված դիմում էր գրել, որտեղ յոթը էջի սահմաններում նկարագրված էր, թե ինչպիսի ենթադրյալ հանցանքներ է իրեն թույլ տվել ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը ապրիլի 4-ին՝ ՄԻՊ թեկնածուի հարցով հանձնաժողովի նիստի ընթացքում, եւ պահանջել էր դատախազությունից ուսումնասիրել վերջինիս վարքը, որտեղ ակնհայտորեն քրեական տարրեր էին առկա: ԱԺ աշխատակազմը, սակայն, հրաժարվել էր դիմումը մուտքագրել դատախազություն՝ պատճառաբանելով, թե դիմումը պետք է ուղարկվի հանձնաժողովի նախագահի առանձին բլանկով, ինչը երբեք չի օգտագործվել ԱԺ-ում, չի եղել նման բլանկ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Թագուհի Թովմասյանը տեղեկացրեց, որ երեկվանից ԱԺ աշխատակազմը գլխադասային հանձնաժողովների բոլոր նախագահների համար պատրաստել է առանձին բլանկներ, որպեսզի հանձնաժողովների նախագահները ունենան առանձին, այլ ոչ թե հանձնաժողովի անունով բլանկ: Ստացվում է՝ Թագուհի Թովմասյանի ուղարկած դիմումի՝ քաղաքական պատճառներով խոչընդոտի արդյունքում ԱԺ-ն փաստաշրջանառության գործող կարգը փոխեց:

Ապրիլի 10-ին լրանում է երեք ամիսը, սակայն այդպես էլ Սահմանադրական դատարանի դատավորները տեղից չշարժվեցին: Խոսքը ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանի գործի մասին է: Բանն այն է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորները հունվարի 10-ից սկսել էին հաշվարկն, ու հենց այդ օրվանից իրենք ունեն երեք ամիս ժամանակ՝ դիմում ներկայացնելու Սեդա Սաֆարյանի գործողության մասով: Եվ, ահա, 2 օրից կլրանա երեք ամիսը, սակայն մինչ օրս ՍԴ որեւէ դատավոր Սեդա Սաֆարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասով դիմում չի ներկայացրել Սահմանադրական դատարանի նախագահին: «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները շրջանառության մեջ դրեցին Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին նախագիծը, սակայն այն մերժվեց: Որպես Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հիմք՝ նշվում էր, որ վերջինս, խախտելով Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները, ձեռնարկատիրությամբ է զբաղվել: Ազգային ժողովը մերժեց, իսկ ՍԴ-ն էլ ոչ մի գործընթաց այդպես էլ չսկսեց: Հիշեցնենք, որ Սեդա Սաֆարյանը դատավորի կարգավիճակում փաստաբանությամբ էր զբաղվել, ինչն արգելված է օրենքով, բայց Նիկոլ Փաշինյանը ներեց նրա օրինախախտումը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հաջորդ շաբաթ նիստեր կանի: Հաջորդ շաբաթ՝ ապրիլի 11-ին արդեն մեկնարկում են ԱԺ նիստերը: Իշխող ֆրակցիան երկուշաբթի օրը՝ նիստերի մեկնարկի նախորդ օրը, խմբակցության նիստ կանի, որի ընթացքում կքննարկեն ԱԺ մեկնարկելիք նիստերի օրակարգի հետ կապված հարցեր: Իսկ արդեն երեքշաբթի ՔՊ վարչության նիստ տեղի կունենա՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Վարչության նիստերին իշխող ուժի անդամները վարչապետի հետ կքննարկեն ներքաղաքական եւ կուսակցաշինական հարցեր: Վարչության նիստին անդրադարձ կլինի նաեւ Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված իրավիճակին, ինչպես նաեւ արտաքին քաղաքական հարցերին:

ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ՍԱԴՐՈՒՄ ԷՐ

Ապրիլի 4-ին ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովում ՄԻՊ թեկնածուի քննարկումն ընթացավ մի շարք աղմկահարույց միջադեպերով:

Ակնհայտ էր, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները, մասնավորապես՝ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը, մտադրված եկել էին՝ նիստը տապալելու:

Արթուր Հովհաննիսյանը անձնական վիրավորանքներ եւ սպառնալիքներ էր հնչեցնում ընդդիմության ՄԻՊ թեկնածուի՝ Էդգար Ղազարյանի հասցեին:

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ նախագահ Դանիել Իոաննիսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անդրադարձել է ՄԻՊ թեկնածուի հաստատման հարցով հրավիրված նիստին:

Դանիել Իոաննիսյանը քննադատեց ՔՊ-ականների պահվածը եւ հայտարարեց, որ այդ ամենին պետք է տրվի իրավական գնահատական:

-Պարոն Իոաննիսյան, ի՞նչ գնահատական կտաք իշխող ֆրակցիայի պատգամավորների վարքագծին, ի՞նչ էին փորձում անել նրանք:

-Նախ՝ սկսեմ նրանից, որ ցանկացած անձ, որը ԱԺ-ում կամ հանձնաժողովում ելույթ ունենալու իրավունք ունի, լինի պատգամավոր, թե այլ անձ, իրավունք ունի իր գնահատականները հնչեցնելու: Կարող ենք համաձայն լինել կամ չլինել դրանց հետ, բայց սա չպետք է արժանանար նման պատասխանի, ինչպես եղավ հանձնաժողովի նիստին, առավել եւս որ պատասխանի մեջ հասցեական սպառնալիքներ էին, նաեւ Քրեական օրենսգրքով արգելված արարքներ տեղի ունեցան: Հույս ունեմ, որ դրանք նաեւ քրեաիրավական ընթացք կունենան, բայց, մեծ հաշվով, սա անընդունելի էր: Շատ ցավալի է, որ այդ միջադեպը տեղի է ունենում Մարդու իրավունքների պաշտպանի ընտրության ժամանակ: Մեկ այլ բան եւս կար խնդրահարույց. ՔՊ-ական մի շարք պատգամավորներ էին խանգարողները, իսկ նիստի ամենամեծ խանգարողը հենց իշխող ֆրակցիայի քարտուղարն էր. ինքը նիստը վարողին՝ Թագուհի Թովմասյանին էր ասում, թե նիստը չի կարողանում վարել, այնինչ հիմնական խնդիրը հենց իրենից էր գալիս:

-Պարոն Իոաննիսյան, ինչպես Դուք էլ նկատեցիք, նիստը տապալելու հիմնական «պարտականությունը» վերցրել էր ֆրակցիայի քարտուղար Արթուր Հովհաննիսյանը: Նա անձնավորված հայհոյանքներ եւ ուղիղ սպառնալիքներ էր հնչեցնում ՄԻՊ թեկնածուի հասցեին. արդյոք չպե՞տք է իրավական գնահատականի արժանանա նրա պահվածքը:

-Իհարկե պետք է իրավական գնահատականի արժանանա: Ես, նախ, պետք է ասեմ, որ պատգամավորի էթիկայի կանոնների ակնհայտ խախտում կար Արթուր Հովհաննիսյանի կողմից, թեեւ ոչ միայն իր կողմից, խմբակցության մյուս պատգամավորների կողմից եւս: Այս ամենը պետք է հստակ գնահատականի արժանանա. միգուցե ԱԺ էթիկայի հանձնաժողով ստեղծվի, իսկ կոնկրետ բռնության սպառնալիքների մասով պետք է իրավական գնահատական լինի, քանի որ ակնհայտ էր՝ կար բռնության սպառնալիքները բռնության վերածելու ռիսկ, քանի որ Արթուր Հովհաննիսյանն ակնհայտ «մաչոյական» ոճով փորձում էր Էդգար Ղազարյանին սադրել եւ գործը հասցնել ֆիզիկական բռնության: Դա ակնհայտ զգացվում էր, հատկապես որ մենք 2021թ.-ին արդեն տեսել ենք, որ ՔՊ խմբակցության մի խումբ պատգամավորներ, այդ թվում՝ Արթուր Հովհաննիսյանը, բռնությունն գործադրում են ԱԺ-ում: Ես չէի զարմանա, եթե, ի վերջո, այս ամենը վերածվեր բռնության:

Զրուցեց ԳՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

Ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Արմենուհի Կյուրեղյանը, Գառնիկ Դանիելյանը, Արման Ղազարյանը եւ Արթուր Մարգսյանը հանդես են եկել օրենսդրական նախաձեռնությամբ եւ առաջարկում են փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում:

Նրանք առաջարկում են ամրագրել, որ ՀՀ վարչապետը պետք է տվյալ համայնքի ավագանու առավել մեծ թվով մանդատներ ունեցող խմբակցության առաջարկով վերջինիս ներկայացուցչին նշանակի համայնքի ղեկավարի պաշտոնակատար մինչեւ օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը: Բանն այն է, որ, այժմ գործող կարգավորումների համաձայն, եթե օրենքով միավորված համայնքի ավագանու, այդ թվում նաեւ համամասնական ընտրակարգով ձեւավորված ավագանու առաջին նիստն ավագանու լիազորությունները ստանձնելու պահից քսան օրվա ընթացքում չի գումարվում, ապա Հայաստանի Հանրապետության վարչապետը նշանակում է համայնքի ղեկավարի պաշտոնակատար մինչեւ օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:

Ըստ պատգամավորների՝ ստացվում է, որ ՀՀ վարչապետին տրվում է լիազորություն իր հայեցողությամբ նշանակել համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ առանց հաշվի առնելու այն փաստը, որ համայնքի բնակիչներն իրենց ընտրությամբ արդեն որոշել են, թե իրենց համայնքի կառավարման գործընթացում որ քաղաքական ուժին են ամենաշատը վստահում:

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ԵՆ ԱՆՈՒՄ

ՀՀ պետական գերատեսչությունների կողմից մեկ անձից կատարված գնումների պրակտիկան շարունակվում է. սա՝ այն դեպքում, երբ ՀՀ իշխանությունները մինչ ընտրվելը բուռն կերպով քննադատում էին նախկիններին հենց այս հանգամանքի համար: Ակտիվությամբ աչքի են ընկնում նաեւ վարչապետի աշխատակազմը, նախարարությունները, Ազգային ժողովը: Մեկ անձից կատարվող գնումների առյուծի բաժինը ընկնում է միջոցառումների կազմակերպմանը, հյուրասիրությանը: Խոսքն այս դեպքում միջազգային պատվիրակությունների՝ Հայաստան այցի ժամանակ կազմակերպվելիք հյուրասիրությունների մասին է, որոնք հենց մեկ անձից գնումների սկզբունքով են արվում: Ընդ որում՝ կան արդեն գերատեսչությունների կողմից սիրելի համարվող վայրեր, օրինակ՝ Ազգային ժողովի պարագայում դա «Երեւան» պանդոկն է: Այս իշխանությունների օրոք պետական անձից գնումներ կատարելու պրակտիկան լայն թափով շարունակվում է: Հաշվարկելով մինչեւ այժմ տարբեր գերատեսչությունների կողմից կատարված գնումների արժեքը՝ ստացվում է 120 մլրդ դրամից ավելի գումար, եւ տարվա սկզբից անցել է ընդամենը երեք ամսից մի փոքր ժամանակ: Հիշեցնենք, որ «Երեւան պանդոկը» պատկանում է «Երեմյան եղբայրներ» ՍՊԸ-ին, եւ նկատենք, որ այն սկսեց սիրելի վայր դառնալ պաշտոնյաների համար հենց հեղափոխությունից հետո, հատկապես՝ վերջին մեկ տարում:

ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՆԵՐԿԱ

ԱԺ բակում՝ հայ-ճապոնական բարեկամությունը խորհրդանշող սակուրաների մոտ, տեղի է ունենում ճապոնական Հանամի տոնին նվիրված միջոցառում: Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ Հայաստան-Ճապոնիա բարեկամական խմբի ղեկավար Բաբկեն Թունյանը: ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան Ֆուկուշիմա Մասանորին ելույթ ունեցավ հայերեն:

Միջոցառմանը մասնակցում էին «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ասպրամ Կրպեյանը, ՔՊ խմբակցության պատգամավորներ Նարեկ Բաբայանը, Հակոբ Ասլանյանը, Հովիկ Աղազարյանը:

ԶՐՈՒՑԵԼ ԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Հեռախոսազրույցի ընթացքում քննարկվել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում շարունակվող հումանիտար ճգնաժամը: Լեռնային Ղարաբաղում ճգնաժամի հաղթահարման համատեքստում ՀՀ վարչապետը կարեւորել է ՌԴ խաղաղապահ առաքելության կողմից հետեւողական քայլերի իրականացումը:

Քննարկվել են 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի, նոյեմբերի 26-ի եւ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի՝ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների եռակողմ հայտարարությունների իրականացմանը, այդ թվում՝ տարածաշրջանային տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակմանը վերաբերող հարցեր:

Մտքեր են փոխանակվել նաեւ հայ-ռուսական հարաբերությունների եւ դրանցում տեղի ունեցող այլ զարգացումների շուրջ:

Իսկ, ահա, Կրեմլի տարածած հաղորդագրությունից պարզ է դառնում, որ հեռախոսազրույցը տեղի է ունեցել հայկական կողմի առաջարկով: Հաղորդագրության համաձայն՝ շարունակել են քննարկել Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը: Եվ այս համատեքստում կրկին կարեւորվել է Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ղեկավարների ձեռք բերված պայմանավորվածությունները:

Բացի այդ, Կրեմլի հաղորդմամբ, երկկողմ հարաբերությունների հետ կապված այլ հարցեր եւս քննարկվել են:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ

ԹՈՒՐՔԻԱՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄ

Թուրքիան ցանկանում է, որ Ադրբեջանը եւ Հայաստանը ստորագրեն համապարփակ խաղաղության համաձայնագիր: Այս մասին երեկ հայտարարել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլութ Չավուշօղլուն իր ռուս գործընկերոջ հետ բանակցություններից հետո: Նա եւ Սերգեյ Լավրովը համատեղ մամուլի ասուլիս են անցկացրել:

Համատեղ ասուլիսում Չավուշօղլուն նշել է, որ երկու օրերի ընթացքում Լավրովի հետ քննարկել են Հարավային Կովկասին, Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերություններին, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր:

Ռուսաստանի արտգործնախարարն իր հերթին կրկնել է, որ Մոսկվան աջակցում է Երեւանի եւ Անկարայի միջեւ հարաբերությունների կարգավորմանը, հատուկ ընդգծել, որ գործընթացը իրենց օգնությամբ է սկսել:

«Մենք ողջունում ենք Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը, որը սկսվել է մեր աջակցությամբ: Ողջունում ենք տրանսպորտային կապերն ու հաղորդակցությունն ապաշրջափակելու ջանքերը: Անշուշտ, մենք ողջունում ենք Հարավային Կովկասի հետկոնֆլիկտային վերականգնումը», - նշել է ռուսաստանյան դիվանագիտության ղեկավարը:

Լավրովը պնդել է, թե Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների միջեւ բոլոր հարցերի շուրջ ձեռք են բերվել եռակողմ պայմանավորվածություններ, որոնք այսօր էլ մնում են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման հիմքում: Ինչպես նախորդ ամիսների ելույթներում, այսօր էլ Ռուսաստանի արտգործնախարարը նշել է, թե արտաքին ուժերը փորձում են խոչընդոտել:

«Հուսով ենք, որ մեր ոչ տարածաշրջանային գործընկերները չեն միջամտի այս գործընթացին, այլ կուղղորդեն կողմերին եռակողմ համաձայնագրերի խստորեն իրականացմանը», - ընդգծել է նա:

Սերգեյ Լավրովը Անկարա է ժամանել մեկ օր առաջ՝ թուրքական կողմի հրավերով: Ապրիլի 6-ի երեկոյան Լավրովն ու Չավուշօղլուն հանդիպել էին ոչ պաշտոնական՝ աշխատանքային ընթրիքի ձեւաչափով: Այսօր Նախատեսված է նաեւ նրա հանդիպումը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի հետ:

Ի տարբերություն ՆԱՏՕ-ի անդամ մյուս երկրների՝ Ուկրաինա ներխուժելու պատճառով Թուրքիան գրեթե չի սահմանափակել համագործակցությունը Ռուսաստանի հետ եւ չի միացել Ռուսաստանի դեմ արեւմտյան պատժամիջոցներին:

Լավրովը այս այցի ընթացքում, Հարավային Կովկասին, Ուկրաինային վերաբերող, միջազգային եւ տարածաշրջանային այլ հրատապ հարցերից բացի, մտադիր է քննարկել նաեւ համատեղ ռազմավարական ծրագրերը՝ «Թուրքական հոսք» գազատարի շահագործումը, «Ակկույու» ատոմակայանի շինարարության ընթացքը. ատոմակայանը Թուրքիայում Ռուսաստանն է կառուցում:

Անցած տարի գարնանը Թուրքիայի նախագահը ստանձնել էր Կիեւի եւ Մոսկվայի միջեւ հիմնական միջնորդի դերը, Թուրքիայում անցած գարնանը նույնիսկ մի քանի նման հանդիպում էր տեղի ունեցել: Անցած տարվա մայիսից, սակայն, ռուս-ուկրաինական բանակցային գործընթացը սառեցվել է, իսկ Թուրքիայում հզոր երկրաշարժի եւ մայիսի 14-ին կայանալիք նախագահական ընտրությունների ֆոնին Թայիփ Էրդողանը այլեւս նախկինի պես միջնորդային ակտիվություն չի դրսեւորում:

Ն.Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՄԵԿՆԻ ԹԵՀՐԱՆ

Ապրիլի 9-ին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն աշխատանքային այցով կգտնվի Թեհրանում, որտեղ հանդիպում կունենա Իրանի Իսլամական Հանրապետության ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Շամխանիի հետ:

ԺԱՄԱՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունն ընդունել ԱՄՆ առեւտրի դեպարտամենտի գլոբալ շուկաների հարցերով փոխքարտուղար Արուն Վենկատարամանին: Ապրիլի 6-ից 8-ը նախատեսվող այցի շրջանակում ԱՄՆ առեւտրի փոխքարտուղար Վենկատարամանը հանդիպում կունենա վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ եւ բացման խոսքով հանդես կգա Հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության նիստին՝ ընդգծելու Միացյալ Նահանգների շահագրգռվածությունը մեր երկու երկրների միջեւ կոմերցիոն կապերի խորացման եւ տարբեր ոլորտներում, այդ թվում՝ էներգետիկ ոլորտում կոմերցիոն փոխգործակցության խթանման հարցում:

ՊԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ ՄԱՄՆԱԿՑԵԼ

ՀՀ պաշտպանության նախարարությունը ընթացիկ տարում պլանավորում է մասնակցել Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի հրամանատարության կողմից կազմակերպվող 2 այլ զորավարժությունների՝ KFOR (Կոսովոյի ուժեր) եւ Saber Junction (Միաձուլված սուր) զորավարժություններին:

Հիշեցնենք, որ նախօրեին Պենտագոնի կայքում Defender 2023 բազմազգ զորավարժության մասին հաղորդագրության մեջ մասնակից երկրների ցուցակում նշված էր նաեւ Հայաստանը: Որոշ ժամանակ անց, սակայն, ԱՄՆ պաշտպանական գերատեսչությունը խմբագրեց հաղորդագրությունը, եւ Հայաստանն այլեւս մասնակիցների ցանկում ներառված չէր:

Բայդենին անվանել է ապուշ

ԱՄՆ նախկին նախագահ Դոնալդ Թրամփը մեղադրել է իր հաջորդին՝ դեմոկրատ Ջո Բայդենին 2021թ. Աֆղանստանից ամերիկյան զորքերի հապճեպ դուրս բերման պատասխանատվությունն ուրիշի վրա դնելու փորձի համար: Քաղաքական գործիչը դա անվանել է «ոչ խելամիտ հանձնում»:

«Այդ ապուշները Սպիտակ տանը, որոնք պարբերաբար քանդում են մեր երկիրը՝ բոլորից ամենաապուշի՝ անհուսալի Ջո Բայդենի գլխավորությամբ, ապատեղեկատվության նոր խաղ են սկսել՝ մեղադրել Թրամփին Աֆղանստանի իրենց ծայրահեղ, ոչ խելամիտ հանձնման համար: Ես հետեւել եմ, թե ինչպես է զարգացել այդ աղետը՝ մնացած ամեն ինչի կողքին»,- գրել է Թրամփն իր Truth Social սոցիալական ցանցում:

Սպիտակ տան նախկին ղեկավարը ԱՄՆ գործող նախագահին մեղադրել է այն բանի համար, որ նա հրամայել է Աֆղանստանից առաջինը տարհանել զինվորականներին, ոչ թե քաղաքացիական անձանց, թույլ է տվել, որ «Թալիբանի» ձեռքում հայտնվեն զենք եւ ռազմական տեխնիկա՝ «85 մլրդ դոլարի արժողությամբ», ինչպես նաեւ՝ որ սպանվեն ամերիկացի զինվորներ:

«Դրանում մեղավոր է միայն Բայդենը, ուրիշ ոչ ոք»,- ընդգծել է Թրամփը:

ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱԽԱԴԵՊ ԲԱՆ՝ ԱԺ-ՈՒՄ

«Տեղի է ունեցել աննախադեպ բան. խայտառակություն»,- ապրիլի 7-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը:

«Ես 1 տարի 7 ամիս է՝ հանձնաժողովի նախագահ եմ, եւ մարդու իրավունքներին առնչվող տարբեր հարցերով օրական միջին 3-4 գրություն ուղարկում եմ պետական կառույցներին: Ապրիլի 5-ին գլխավոր դատախազին ուղարկել եմ մի գրություն Սպարտակ անունով մի քաղաքացու մասին, որին այսօր գլխավոր դատախազը շատ օպերատիվ պատասխանել է:

Նույն ձեւով գրել եմ նաեւ երեկ, եւ մուտքագրել ենք ընդհանուր բաժին գլխավոր դատախազին ուղղված դիմումը, որտեղ 7 էջ շարադրված է, թե ինչ ենթադրյալ հանցանքներ է թույլ տվել ՔՊ-ի քարտուղար Արթուր Հովհաննիսյանը ապրիլի 4-ին կայացած մեր հանձնաժողովի նիստում: Այսօր գալիս եմ, պարզում եմ, որ նամակը չի գնացել: Աշխատակազմից ասում են՝ մենք չգիտեինք, որ մինչեւ հիմա հանձնաժողովի նախագահը բլանկ չունի: Մենք պետք է հանձնաժողովի բլանկ սարքենք, դրանով ուղարկեք, որովհետեւ եթե հանձնաժողովի բլանկով եք ուղարկում, պետք է հանձնաժողովի բոլոր անդամները քվեարկեն: Այսինքն՝ ես հիմա պետք է սա ուղարկեմ ՔՊ-ին, ասեմ՝ ՔՊ-ի պատգամավորները կողմ քվեարկեն, որ Արթուր Հովհաննիսյանին պատժեն: Տաֆտալոգիա է»,- ասաց նա:

Թովմասյանը նկատեց, որ ինքը կարող է այս նամակն ուղարկել որպես պատգամավոր, բայց ինքը գրել է՝ որպես հանձնաժողովի նախագահ, քանի որ իր լիազորությունները, որպես նախագահ, չի կարողացել իրացնել. «Ես չեմ կարողացել նիստը այնպես վարել, որ վիրավորանք չհնչի: Ես ներկայացրել եմ մի շարք հանցագործություններ եւ օրինախախտումներ, այդ թվում՝ պատգամավորի էթիկայի վարքականոնի խախտումը:

Ես այս քաշքշուկը համարում եմ քաղաքական հրահանգ, եւ սա խայտառակություն է ինստիտուցիոնալ առումով, որովհետեւ ԱԺ-ն խորհրդարանական երկրում անկախ մարմին է, երկրորդ՝ ԱԺ աշխատակազմն ապաքաղաքական մարմին է. նրանք չպետք է մտնեն բովանդակության մեջ ու ասեն՝ վա՛յ, սա Արթուր Հովհաննիսյանին է առնչվում, տեսնենք՝ ինչ խնդիր կարանք սարքենք, որ չգնա դիմումը: Այսինքն՝ ինստիտուցիոնալ առումով մեր երկիրը գահավիժում է: Բա եթե այս խնդիրը կար, 1,5 տարի ես դատախազին ուղարկում եմ գրություններ, բա ինչի՞ չէիք ասում՝ հանձնաժողովի նախագահի բլանկով չի:

Սա նշանակում է, որ ՔՊ խմբակցությունն ուղղակի աշխատակազմին վերահսկում է, ինչը չի կարելի»,-ասաց Թագուհի Թովմասյանը:

Հանձնաժողովի նախագահը մանրամասնեց, որ այդ 7 էջում ենթադրյալ հանցագործության մասին բոլոր հղումներն են, թե քանի օրենք է խախտվել, ինչպիսի արտահայտություններ են թույլ տրվել, որոնք պարունակում են սպառնալիք:

Ն.Հ.

ԼՈՒՐԵՐ

ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ Է ԴԻՄԵԼ ⇨

«Ապարան» բժշկական կենտրոնից ոստիկանություն հաղորդում էր ստացվել, որ կրծքավանդակի վնասվածքով բուժօգնության է դիմել 41-ամյա մի տղամարդ: Ոստիկանությունից հայտնում են, որ Ապարանի բաժնի քրեական հետախույզները մեկնել էին հիվանդանոց: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նրանք պարզել էին, որ Մաշտոցի փողոցի շենքերից մեկի մոտ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն էր եղել, որի ընթացքում տուժածին դանակահարել էր 49-ամյա համաքաղաքացին: Ապարանի ոստիկանների բացատրական աշխատանքի արդյունքում նա ներկայացել է բաժին ու ձերբակալվել: 49-ամյա տղամարդու նկատմամբ կիրառվել է տնային կալանք: Նախաքննությունը շարունակվում է:

ՊԱՅՈՒՍԱԿ Է ԳՈՂԱՑԵԼ

Ապրիլի 6-ին ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի համայնքային ոստիկանները ստացել էին տեղեկություն, որ Մատրոսովի փողոցի 28-ամյա մի բնակիչ նախորդ օրը «Սուրբ Գրիգոր Նարեկացի» պոլիկլինիկայի մի աշխատասենյակից գողացել է պայուսակ: Համայնքային ոստիկանները ստուգել են տեղեկությունն ու պարզել, որ պայուսակում փող կար: Ոստիկանությունից հայտնում են, որ նույն օրը երիտասարդը հայտնաբերվել, գողություն կատարելու կասկածանքով ձերբակալվել եւ տեղափոխվել է Մուշի բաժին: Նա չի ժխտել, որ պոլիկլինիկայի աշխատասենյակներից մեկի պահարանից գողացել է պայուսակ, այնուհետեւ պայուսակից հանել 50 հազար դրամ ու 1000 ռուբլին, իսկ պայուսակը պոլիկլինիկայի բակում նետել է: 40 հազար դրամը ծախսել էր անձնական կարիքների համար, 10 հազար դրամ ու հազար ռուբլին տանն էին: Շիրակի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ: Կատարվում է նախաքննություն:

ԼՈՒՐԵՐ

ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Պոլիտրավմա, տրավմատիկ շոկ ախտորոշմամբ Սպիտակի բժշկական կենտրոն է ընդունվել 6-ամյա տղա երեխա:

Ըստ հարազատների՝ երեխան վնասվածքները ստացել է տրակտորի կցորդիչից վայր ընկնելու հետեւանքով:

Այս մասին հայտնում են Սպիտակի բժշկական կենտրոնի մամուլի ծառայությունից՝ նշելով, որ ընդունման պահին երեխայի վիճակը գնահատվել է ծանր: Անմիջապես կազմակերպվել են անհրաժեշտ բոլոր հետազոտությունները, հրավիրվել են նեղ մասնագետներ, այդ թվում՝ վնասվածքաբան, նյարդաբան, վիրաբույժ եւ ռեանիմատոլոգ:

Բուժանձնակազմը ցուցաբերել է առաջին անհրաժեշտ բուժօգնություն: Փոքրիկի վիճակը կայունացվել է:

Հետագա նեղ մասնագիտական բուժումը շարունակելու նպատակով որոշում է կայացվել երեխային տեղափոխել Երեւան՝նեղ մասնագիտացված բժշկական հաստատություն:

ԽՈՇՈՐ ԱՎՏՈՎԹԱՐ

Երեւանում ապրիլի 6-ին ավտովթար է տեղի ունեցել. ժամը 23:50-ի սահմաններում Թեւոսյան փողոցի թիվ 12 հասցեի դիմաց բախվել են Կոտայքի մարզի բնակիչ 64-ամյա Իսայի Ի.-ի վարած Zhongtong մակնիշի ավտոբուսն ու Երեւանի բնակիչ 28-ամյա Էդգար Փ.-ի վարած Volkswagen մակնիշի ավտոմեքենան:

Վթարի հետեւանքով Էդգար Փ.-ն եւ նրա ուղեւոր՝ Երեւանի բնակիչ 27 ամյա Ս.Հ.-ն մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է վարույթ:

Կայքի տեղեկություններով՝ ավտոբուսը հաշվառված է Երեւանի քաղաքապետարանի հաշվեկշռում եւ սպասարկում է թիվ 97՝ Էրեբունի զանգվածից մինչեւ Նոր Նորքի 1-ին զագնված երթուղին:

ԿԱՆ ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

Ապրիլի 7-ին՝ ժամը 08:59-ին, Սյունիքի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Մեղրի-Ագարակ ավտոճանապարհի 3-րդ կմ-ին տեղի է ունեցել ՃՏՊ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ բախվել են Lada Niva մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝ Գ.Ա.) եւ Paz մակնիշի ավտոբուսը (վարորդ՝Ա. Մ.):

Փրկարարները Paz մակնիշի ավտոբուսի 2 ուղեւորներին մոտեցրել են շտապօգնության ավտոմեքենային: Տուժածները հոսպիտալացվել են Մեղրու ԲԿ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 69 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱԿԱՍԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԼՐԱՑՆԵԼ

Տավուշի մարզում բժիշկների պակաս է զգացվում, որը փորձում են մասամբ լրացնել: Տավուշի մարզպետարանը հայտնում է, որ ՀՀ կառավարության՝ 2023 թվականի մարտի 16-ի թիվ 352-Ա որոշման 2-րդ հավելվածով՝ Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում «Բուժական գործ» մասնագիտությամբ սահմանված է 28 նպատակային ուսուցման տեղ, որից 3-ը՝ Տավուշի մարզին: Նպատակային տեղերում ընդունված ուսանողները սովորում են անվճար եւ ուսումնառության ընթացքում ստանում են կրթաթոշակ: Նպատակային տեղերում ընդունված դիմորդները պայմանագիր են կնքելու ՀՀ առողջապահության նախարարության հետ, որի համաձայն՝ ուսումն ավարտելուց եւ ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու իրավունք ձեռք բերելուց հետո պարտավորվում են վերադառնալ մարզ, առնվազն 3 տարի ժամկետով աշխատել մարզի բժշկական կազմակերպություններում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆ

Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում ընդհանուր առմամբ աշխատում են 1830 ուսուցիչ եւ ուսուցչի օգնական: Նրանցից 1722-ն ունի բարձրագույն մանկավարժական կրթություն, 173-ը՝ բարձրագույն ոչ մանկավարժական կրթություն, 113-ը՝ միջին մասնագիտական կրթություն: Մարզի հանրակրթական դպրոցներում առկա է ուսուցչի 27 թափուր հաստիք՝ տարբեր առարկաների գծով: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների մի մասը չունի բարձրագույն մանկավարժական կրթություն: Ի պատասխան տեղեկատվական իմ հարցման՝ մարզպետարանից հայտնել են, որ մարզի հանրակրթական 76 դպրոցների տնօրեններից 62-ն ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն:

ԾԵԾԵԼ Է ԿՐՏՍԵՐ ՍԵՐԺԱՆՏԻՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Բերդ քաղաքի բնակիչ, 1988թ. ծնված Գեւորգ Հակոբյանի դատավարությունը: Գ. Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի հրաձգային գումարտակի հրամանատար, կոչումով փոխգնդապետ, 2021թ. մարտի 29-ին՝ ժամը 06:30-ից 06:40-ի սահմաններում, զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի մասնաշենքի մուտքի դիմաց զինվորական ծառայության պարտականությունները կատարելու՝ «Վեր կաց» հրամանից հետո ժամանակին չարթանանալու եւ շարք չկանգնելու կապակցությամբ վիճաբանել է իր նկատմամբ ստորադաս, կրտսեր սերժանտ Համլետ Դերձյանի հետ, որի ընթացքում ծեծի է ենթարկել նրան, ձեռքերով քաշքշել եւ մի քանի անգամ հարվածել է վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով ֆիզիկական ցավ. այդ հարվածների հետեւանքով Հ. Դերձյանի քթից արյուն է հոսել: Գ. Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 2-րդ մասով: Դատարանը նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրել կալանավորումը, այնուհետեւ՝ 1,5 միլիոն դրամ գրավը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄ

ԱՐՑԱԽԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը Ադրբեջանի կողմից արգելափակելու պատճառով ԱՀ առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից ուռուցքային եւ սիրտ-անոթային համակարգի ծանր հիվանդություններ ունեցող 12 անձ երեկ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ տեղափոխվել է ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

Արցախի առողջապահության նախարարության հաղորդմամբ՝ 9 բուժառներ, որոնք պետական պատվերի շրջանակներում ուղեգրվել են ՀՀ՝ բուժում ստանալու, ուղեկցողների հետ վերադարձել են Արցախ:

ԱՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող բուժհաստատություններում շարունակում են դադարեցված մնալ պլանային վիրահատությունները:

«Արեւիկ» բուժմիավորումում 7 երեխա գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 9 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 3-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

Մինչ այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել ընդհանուր 276 հիվանդ:

Ադրբեջանի՝ Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության նկատմամբ 2020 թվականի սեպտեմբերի լայնամասշտաբ ագրեսիայի ընթացքում եւ հետո Ադրբեջանի իշխանություններին հաջողվեց, բացի Արցախից պոկածգրաված տարածքներից, գրավել նաեւ Արցախ-Հայաստան սահմանակից մարզերը, ինչի պատճառով թշնամական Ադրբեջանի կողմից շրջափակված Արցախի Հանրապետության միակ կապը ՀՀ հետ իրականացվում էր մի միջանցքով:

Ըստ Եռակողմ հայտարարության՝ Ադրբեջանը պիտի ապահովեր, ինչը նույնն է՝ չխոչընդոտեր Արցախի միջանցքով հաղորդակցությանը, իսկ ՌԴ խաղաղապահ զորքերը պիտի վերահսկեին այդ անխոչընդոտ կապը:

Սակայն շարունակելով հայասպան քաղաքականությունը՝ Ադրբեջանը կազմակերպեց, այսպես կաչված, «բնապահպանների» բողոք-ցույց՝ Արցախի (Լաչինի) միջանցքը փակելով: 100 օրից ավելի է՝ Արցախի Հանրապետությունը գտնվում է տոտալ շրջափակման մեջ, իսկ ադրբեջանցի «բնապահպանները», որոնց թվում են Ադրբեջանի հատուկ ծառայությունների գործակալներ, ապրիլյան պատերազմի մասնակից,... դարձել են անձեռնմխելի՝ նոր բախման շանտաժով:

Չնայած տարբեր երկրների կոչերին՝ բացելու Արցախ-Հայաստան միջանցքը՝ ադրբեջանական հերթական ագրեսիան դեռ մնում է անպատիժ:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցներից կատարվել է վերաբաշխում՝ 152 մլն 147 հազար դրամի չափով: Նախատեսված գումարը կուղղվի ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման աշխատանքներին եւ մարզադահլիճի համար գույքի ձեռքբերմանը:

Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման աշխատանքները մեկնարկել են 2021 թվականին, եւ նախատեսվում է ավարտել այս տարվա ընթացքում: Մարզադահլիճի կառուցման ընդհանուր արժեքը կազմում է 554 մլն 276 հազար դրամ:

Ներկայում մարզադահլիճի կառուցման աշխատանքներն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է 92 մլն 623 հազար դրամ:

Միաժամանակ, նախատեսվում է նոր կառուցվող մարզադահլիճը համալրել համապատասխան գույքով, որի ձեռք բերման նպատակով կհատկացվի 59 մլն 524 հազար դրամ գումար:

Այսպիսով, որոշման ընդունմամբ կապահովվեն ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում ծանրամարտի մարզադահլիճի կառուցման ավարտական աշխատանքները եւ գույքով համալրումը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է 0.2% ԳՆԱՃ:

2023թ. մարտին, 2022թ. մարտի համեմատ, ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 4.6%, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 0.2% գնաճ:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2023թ. մարտին, փետրվարի համեմատ, գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.4% գնաճ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գների մակարդակը, նախորդ ամսվա համեմատ, աճել է 0.2%-ով:

2023թ. մարտին, փետրվարի համեմատ, բենզինի եւ դիզելային վառելիքի գներն աճել են 7.0% եւ 1.5%-ով:

2023թ. մարտին, 2022թ. մարտի համեմատ, հանրապետությունում գրանցվել է բենզինի եւ դիզելային վառելիքի 26.9% եւ 2.8%, իսկ 2022թ. դեկտեմբերի համեմատ՝ 14.4% եւ 6.1% գնանկում:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2023թ. մարտին, 2022թ. մարտի համեմատ, սակագներն աճել են 6.0%-ով, իսկ 2023թ. փետրվարի համեմատ՝ 0.4%-ով:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ՃՏՊ. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի նիստում ընդունված մի շարք որոշումներով ՀՀ ներքին գործերի նախարարության ենթակայությանը կհանձնվեն մի շարք ՊՈԱԿ-ներ, մասնավորապես՝

- Ոստիկանության տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ը,
- «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ը,
- «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը,
- «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» եւ «Սեյսմիկ պաշտպանության արեւելյան ծառայություն» ՊՈԱԿ-ը,
- «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը,
- «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ը,
- «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամը,
- «Հատուկ կացարան» պետական հիմնարկը:

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ՝ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՄԲ

Հայաստանի կառավարությունն առաջարկում է ՆԳՆ փրկարար ծառայության աշխատակիցների համար ներդնել ատեստավորման համակարգ՝ հետագայում բարձրացնելով նրանց աշխատավարձը: «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու օրենքի նախագիծն Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի նիստում ներկայացրեց ներքին գործերի նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը:

Ատեստավորման համակարգն արդեն ներդրվել է Ջինված ուժերում եւ ոստիկանությունում: Քննարկվում են այդ համակարգին Ազգային անվտանգության ծառայությունը միացնելու ծրագրերը:

Սարգսյանի խոսքով՝ փոփոխությունները մի կողմից կբարձրացնեն հայ փրկարարների պատրաստության, որակավորման մակարդակը, մյուս կողմից թույլ կտան զգալիորեն բարելավել իրենց նյութական վիճակը:

«Ատեստավորման առաջին անհաջող փորձի դեպքում աշխատողը երեք տարվա ընթացքում առնվազն երեք ատեստավորման հնարավորություն ունի: Այս ընթացքում փրկարարներին մեկ ամիս կտրվի ատեստավորմանը նախապատրաստվելու համար: Այն փրկարարները, որոնք վերապատրաստման միջոցով երրորդ տարվա ավարտին չեն կարողանա հաղթահարել շեմը, ապա կազատվեն պաշտոնից»,- ասաց Սարգսյանը:

Նա հավելեց, որ խոսքը հավելավճարի՝ գրեթե կրկնակի չափով հաշվարկի մասին է, քանի որ այս պահին էլ աշխատավարձերն այնքան էլ բարձր չեն:

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեն սկսում է կրթադաստիարակչական, հաղորդակցային եւ հանրային իրազեկման նոր ծրագիր, որի շրջանակներում Կոմիտեի քննիչները դասընթացներ են վարելու հանրամեսությունում գործող հանրակրթական միջին (8-9-րդ դասարան) եւ ավագ (10-12-րդ դասարան) ուսումնական հաստատություններում:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը ստորագրել է «Դասը վարում է քննիչը» խորագրով դասընթացների առարկայական ծրագիրը եւ դասընթացավարներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին հրամանը, որով փաստացի մեկնարկում է նշված նախաձեռնությունը: Հրամանով սահմանվել են քննիչների կողմից վարվելիք դասընթացի թեմատիկ շրջանակը, անցկացման կարգը, դասընթացավարներին ներկայացվող հիմնական պահանջները:

Ծրագիրն ուղղված է մատաղ սերնդի իրավագիտակցության բարձրացմանը, օրինապաշտ վարքագծի խրախուսմանը, հանցածին հակումների իրավական հետեւանքների բացատրմանը: Հիմնական խնդիրներից է դեռահասների եւ երիտասարդների ներգրավման կամ թիրախավորման տեսանկյունից առավել ռիսկային հանցատեսակների դրսեւորման եղանակների, դրանք ծնող պատճառների եւ կատարմանը նպաստող պայմանների պարզ եւ մատչելի իրազեկումը:

Մասնավորապես, դասընթացների հիմնական թեմաներն են լինելու հափշտակության տեսակները, հրազենի, պայթուցիկ նյութերի եւ սարքերի, փամփուշտների ապօրինի շրջանառությունը, սառը զենք կրելը, թմրանյութերի ապօրինի շրջանառությունը, խուլիգանությունը եւ դրա հատկանիշները, քրեական ենթամշակույթը եւ դրա դեմ պայքարը, անչափահասին հանցանքի կատարման մեջ ներգրավելը, երեխաների թրաֆիքինգը, կոռուպցիան եւ դրա հասարակական վտանգավորությունը, ընտանեկան բռնությունը եւ դրանից պաշտպանության միջոցները, կիբեռհանցագործությունները, պարտադիր զինվորական կամ զորահավաքային զորակոչից խուսափելը եւ այլն:

Քննիչները աշակերտներին կիրազեկեն ՀՀ-ում իրավապահ, արդարադատություն իրականացնող մարմինների գործառույթների, առանձնահատկությունների մասին:

Նախատեսվում է, որ ՀՀ քննչական կոմիտեի յուրաքանչյուր ստորաբաժանում ուսումնական տարվա ընթացքում պետք է ապահովի առնվազն 6 առարկայական թեմայի դասավանդում՝ ուսհաստատությունների վարչակազմերի հետ նախապես համաձայնեցնելով ժամանակացույցը եւ առարկայական ծրագիրը: Դասընթացներն ընդգրկելու են ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մարզերի ուսումնական հաստատությունները: Դրանցում ներգրավվելու է նաեւ ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար անձնակազմը:

Դասընթացավարների ընտրության հարցում նախապատվությունը տրվելու է փորձառություն, գիտամանկավարժական գործունեության փորձ ունեցող, լսարանի հետ հաղորդակցվելու հմտություններ ունեցող աշխատակիցներին:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահը հանձնարարել է ընդգծված հետեւողականություն ցուցաբերել ծրագրի իրականացման հարցում: «Դասընթացը վարում է քննիչը» ծրագրի շրջանակներում հրամանով սահմանված պահանջների կատարումը հաշվի է առնվելու Կոմիտեի ստորաբաժանումների աշխատանքների կատարողականի գնահատման հարցում:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՄԵՑՐԵԼ ԵՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի մարզային կենտրոնի տեսուչները ստուգում են իրականացրել Գոհար Գասպարյան Ա/Ձ-ին պատկանող հրուշակեղենի արտադրամասում եւ հայտնաբերել իրավական ակտերով սահմանված նորմերի մի շարք խախտումներ (Սյունիքի մարզ, ք. Գորիս):

Մասնավորապես՝

- արտադրական շինության նախագծումը, դրա կառուցվածքը, դասավորվածությունը արվել է առանց հաշվի առնելու հոսքայնությունը՝ չբացառելով պարենային հումքի եւ սննդամթերքի, աղտոտված եւ մաքուր գույքի հանդիպակաց խաչաձեւ աղտոտումը, կենդանիների, այդ թվում՝ կրծողների եւ միջատների ներթափանցումը, կեղտի կուտակումները եւ բորբոսի առաջացումը,
- արտադրական շինությունը ապահովված չի եղել սանհանգույցով, լվացարաններով,
- հատակի եւ պատերի մակերեւույթը պատրաստված չի եղել անջրանցիկ, լվացվող նյութերից,
- բացվող ներքին պատուհանները չեն ունեցել հեշտությամբ հանվող եւ մաքրվող միջատապաշտպան ցանցեր,
- սննդի կառույցն ապահովված չի եղել անձնակազմի համար հանդերձարանով,
- արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրում, լվացում, ախտահանում, միջատազերծում եւ կրծողների ոչնչացում չի իրականացվել,
- չեն օգտագործվել սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող համապատասխան տեխնոլոգիական սարքավորումներ եւ գույք:

Արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է հայտնաբերված խախտումները վերացնելու ժամկետ:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ շարունակվում է նոր չափանիշներով մաքսային ծառայողներ պատրաստելու դասընթացների շարքը:

Դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցները կստանան հավաստագիր եւ աշխատելու հնարավորություն Մաքսային ծառայության տարբեր պաշտոններում: Դասընթացը եւ դասընթացին առնչվող թեստավորումներն անցկացվում են անվճար հիմունքներով՝ ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից:

Դասընթացի ընդունելությանը կարող են մասնակցել հայրենին տիրապետող, 18 տարին լրացած, բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Դասընթացի ընդունելությունը բաղկացած է հետեւյալ փուլերից՝ համակարգչային գիտելիքների ստուգում, մասնագիտական գիտելիքների ստուգում, բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ներկայացում եւ ընդունելության հարցազրույց:

Դասընթացը կանցկացվի տեսական եւ գործնական փուլերով, նախատեսվում է նաեւ ավարտական հարցազրույց:

Դասընթացի ընդունելության կարգը, ժամկետները, պահանջվող փաստաթղթերը եւ այլ մանրամասներ ներկայացված են ՊԵԿ պաշտոնական կայքում:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետը 2023թ. մայիսի 5-ն է:

Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք զանգահարել՝ 060 844 988, 060 844 986, 060 844 951 կամ գրել dimord@src.training-center.am էլեկտրոնային փոստի հասցեին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՅՏՆԻ ՀՅՈՒՐԵՐ

«ՀԱՐՍԱՆԵԿԱՆ Ping Pong»

Ապրիլի 4-ին կայացավ «Հարսանեկան Ping Pong» ներկայացման պրեմիերան: Սեր, դավաճանություն, սկանդալներ ու մի մեծ խառնաշփոթ, որի ականատեսը կարող եք այսուհետ դառնալ Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում:

Ներկայացումը մի քանի պիեսներից ամբողջացրած պատմություն է, որը թարգմանել եւ ադապտացրել է Բաբկեն Չոբանյանը: Կատակերգության պրոդյուսերները Արման Միտոյանն ու Տիգրան Վիրաբյանն են:

Վերջիններս վաղուց են համագործակցում եւ կարողանում են իրենց շուրջ համախմբել տաղանդավոր ստեղծագործողների:

«Ներկայացման մտահղացումը ծնվել էր Տիգրան Վիրաբյանի մոտ: Սցենարի ընտրությունը փոքր-ինչ երկար տեւեց՝ մոտ երկու տարի, եւ երբ որոշումը կայացվեց, ռեժիսոր Արշո Հարությունյանն անցավ գործի: Դերասանական կազմն ի սկզբանե ընտրված էր: Միշտ ցանկացել ենք գտնել այն գործը, որը համահունչ կլիներ այս կազմին»,-նշում է Արման Միտոյանը:

Ներկայացման մեջ խաղում են դերասաններ Լեւոն Հախվերդյանը, Գոռ Հակոբյանը, Իննա Խոջամիրյանը, Անի Խաչիկյանը, Մանե Մխոյանը:

«Իմ սիրած դերասաններն են բեմադրության մեջ զբաղված: Փորձերի ընթացքում հասկացանք, որ ստեղծագործական խումբը կամաց-կամաց վերածվում է լավ ընտանիքի, եւ այսօր կարողացան ապացուցել, որ սիրում են, գնահատում են իրենց աշխատանքը: Հանդիսատեսի բուռն արձագանքն ապացուցեց, որ չենք սխալվել պիեսի, դերասանների ընտրության հարցում», -լրագրողների հետ զրույցում ասաց պրոդյուսերներից Տիգրան Վիրաբյանը, որը նաեւ մտահղացման հեղինակն է: Պրոդյուսերը վստահ է՝ ներկայացումը երկար կյանք կունենա: Արդեն շրջագայելու առաջարկներ են ստացել: Հայտնի են նաեւ ներկայացման բեմում լինելու առաջիկա օրերը՝ ապրիլի 25, մայիսի 2 եւ մայիսի 12:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲՈԴԻԲԻԼԴԻՆԳ

ՄԱՐԶԻԿԸ ՑՆՑԵԼ Է ՀԱՄԱՑԱՆՑԸ

Պրոֆեսիոնալ բոդիբիլդերն իր մկանոտ մեջքով խենթացրել է համացանցը: Ռալուկա Ռադուկուն բոդիբիլդինգի ամենահայտնի անուններից է:

Ռումինացի մարզիկը երկար ճանապարհ է անցել IFBB պրոֆեսիոնալ դառնալու համար: Նա մասնակցել է այնպիսի մրցույթների, ինչպիսիք են Bigman Pro-ն, Europa Pro-ն եւ Muscle Fest Romania Pro-ն: Նրա անհավանական սխրանքն ու կազմվածքը, անշուշտ, գրավել են շատերի ուշադրությունը:

Վերջերս բոդիբիլդերն իր Instagram-ում ցուցադրել է իր մեջքը: Ակնհայտ է, որ Ռադուկուն կարող է լրջորեն մրցել բազմաթիվ փորձառու բոդիբիլդերների հետ: Այնուամենայնիվ, ինչպես եւ կանխատեսվում էր, նրա կազմվածքը գրավել է երկրպագուների ուշադրությունը: Նրանք բազում մեկնաբանություններ են գրել՝ գնահատելով նրա քրտնաջան աշխատանքը:

«Շոուները շահում են թիկունքից»,-հրապարակմանը կից գրել է նա: Կնոջ երկգլուխ մկանները հսկայական տեսք ունեն եւ համաչափ էին նրա մեջքին:

Հատկանշական է, որ սպորտի նկատմամբ նրա կիրքը եւ նրա անողոք քրտնաջան աշխատանքը ստեղծել են Raduku-ի առցանց երկրպագուների մեծ տիրույթ: Նա ունի ավելի քան 36 հազար հետեւորդ, որոնք երբեք առիթը բաց չեն թողնում՝ հաճոյախոսելու նրա զարմանալի լուսանկարները:

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

ՉԵՆ ՍՏԱՑԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ

«Լեռնային Արցախ» եւ «Գանձասար» ակումբները չեն ստացել ազգային արտոնագիր եւ չեն կարողանա մասնակցել Պրեմիեր լիգայի հաջորդ մրցաշրջանին, եթե բողոքարկումը չբավարարվի:

Տեղի է ունեցել ՀՖՖ ակումբների արտոնագրման կոմիտեի (1-ին ատյանի մարմնի) հերթական նիստը. հաղորդում է ՀՖՖ-ի կայքը:

Նիստի ընթացքում քննության էին դրվել Fastex Հայաստանի պրեմիեր լիգայի 2022/2023 թթ. մրցաշրջանի մասնակից 9 ակումբների՝ «Ալաշկերտ», «Փյունիկ», «Վան», «Ուրարտու», «Արարատ», «Նոա», «Արարատ-Արմենիա», «Շիրակ», «Լեռնային Արցախ», եւ ՀՀ առաջին խմբի 2022/2023 թթ. առաջնությունում հանդես եկող 2 ակումբների՝ «Գանձասար» եւ «Վեստ Արմենիա», արտոնագրային ոչ ֆինանսական չափանիշի փաստաթղթային փաթեթները, որոնցով նրանք դիմել էին Ազգային արտոնագիր ստանալու համար: Այդ արտոնագրերը նրանց իրավունք կընձեռեն մասնակցելու ամռանը մեկնարկող Fastex Հայաստանի պրեմիեր լիգայի 2023/2024 թթ. մրցաշրջանին:

Արտոնագրման կոմիտեն կայացրեց միաձայն որոշում, ըստ որի՝ Ազգային արտոնագրեր շնորհվեցին թեկնածու ակումբներից 9-ին՝ «Ալաշկերտ ՖԱ», «Փյունիկ ՖԱ», «Վան ՖԱ», «Ուրարտու ՖԱ», «Արարատ ՖԱ», «Նոա ՖԱ», «Արարատ-Արմենիա ՖԱ» «Շիրակ ՖԱ» եւ «ՖԱ Վեստ Արմենիա»:

Ազգային արտոնագրերի շնորհումից հետո ակումբները կմասնակցեն ՈՒԵՖԱ-ի արտոնագրային գործընթացին եւ կսկսեն նախապատրաստել իրենց ֆինանսական փաստաթղթային փաթեթները վերոնշյալ արտոնագիրը ստանալու համար:

Արտոնագրման կոմիտեն 6 կողմ եւ 1 ձեռնպահ քվեարկությամբ որոշեց մերժել «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի ազգային արտոնագիրն առ այն, որ ակումբը չի բավարարել ՀՖՖ ակումբների արտոնագրման կանոնակարգի (2022թ. խմբագրություն) հոդված 17-ի եւ հոդված 39-ի պահանջները:

Կոմիտեն նաեւ 5 կողմ, 1 դեմ եւ 1 ձեռնպահ քվեարկությամբ որոշեց մերժել «Գանձասար ՖԱ» ՀԿ-ի ազգային արտոնագիրն առ այն, որ ակումբը չի բավարարել ՀՖՖ ակումբների արտոնագրման կանոնակարգի (2022թ. խմբագրություն) հոդված 17-ով եւ հոդված 39-ով սահմանված պահանջները:

«Գանձասար ՖԱ» ՀԿ-ի եւ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի արտոնագրման դիմումի մերժման արդյունքում վերոնշյալ ակումբների առաջին թիմերը հնարավորություն չեն ունենա մասնակցել Fastex Հայաստանի պրեմիեր լիգայի 2023/2024 թթ. մրցաշրջանին:

Ակումբներն իրավունք ունեն բողոքարկելու ՀՖՖ ակումբների արտոնագրման կոմիտեի (1-ին ատյանի մարմնի) կայացրած որոշումը աշխատանքային 5 (հինգ) օրվա ընթացքում՝ սահմանված ընթացակարգի համաձայն դիմելով ՀՖՖ ակումբների արտոնագրման բողոքարկման կոմիտե (Բողոքարկման մարմին):

● Ապրիլի 11-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Ասի՝ասեմ, չասեք՝չասեց». Հովհաննես Դավթյան» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4000-8000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչ արտոնություններ ունեն հաշմանդամները:

Սիրան Պողոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամություն ունեցող անձինք՝

- ընդգրկված են բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում եւ կարող են օգտվել սահմանված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու արտոնություններից,
- ընդգրկված են անվճար եւ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում: 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվել անվճար դեղեր ձեռք բերելու արտոնությունից, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 50% զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից,
- ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող եւ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում,
- 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար էլեկտրատրանսպորտից օգտվելու իրավունք,
- իրավունք ունեն ստանալու աջակցող միջոցներ՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնման տեխնիկական եւ այլ օժանդակ միջոցներ՝ համապատասխան վերականգնողական անհատական ծրագրին, պետական հավաստագրի հիման վրա:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով, երկու տարի ժամկետով, մինչեւ 18 տարին լրանալը եւ անժամկետ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ չափանիշներ են հաշվի առնվում վարկ տրամադրելիս: Արդյոք այդ չափանիշների առկայության դեպքում բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավո՞ր է դիմողի հետ կնքել վարկային պայմանագիր:

Համլետ Հարությունյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Բանկը կամ այլ վարկային կազմակերպություն, գնահատելով վարկը մարելու հաճախորդի հնարավորությունը, ինքն է որոշում՝ կնքել վարկային պայմանագիր, թե ոչ:

Վարկունակությունը գնահատելու նպատակով կարող են հաշվի առնվել հետեւյալ հանգամանքները՝

աշխատավարձի եւ այլ եկամուտների առկայությունը,
վարկային պատմությունը,
անշարժ եւ այլ գույքի առկայությունը,
երաշխավորների առկայությունը,
տարիքը,
այլ հանգամանքներ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է («Վարկային տեղեկատվության շրջանառության եվ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայ դաշնակահարները Շոպենի միջազգային դաշնամուրային մրցույթում արժանացել են գլխավոր մրցանակների: Հարթֆորդ Շոպենի հիմնադրամը հովանավորում է Շոպենի դաշնամուրների ամենամյա միջազգային մրցույթը: Արդեն 14 տարի շարունակվող քառօրյա միջոցառումը (մարտի 8-12) համախմբել էր տարբեր տարիքի 85 հավակնորդ դաշնակահարների: Այս տարի միջոցառմանը մասնակցել են դաշնակահարներ ԱՄՆ-ից, Կանադայից, Ինդոնեզիայից, Ճապոնիայից, Չինաստանից, Հարավային Կորեայից եւ Հայաստանից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 + 4 +5 + 9
Կոտայքի լեռներ	0 + 3 + 4 + 7
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +10 +13
Գեղարքունիք	0 + 4 + 4 + 7
Լոռի	+ 2 + 6 + 8 + 12
Տավուշ	+ 3 + 8 +11 + 14
Արագածոտնի լեռներ	0 + 2 + 3 + 6
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 8 +10 + 14

Արարատ	+ 9 + 12 +16 + 18
Արմավիր	8 + 11 +15 + 17
Վայոց ձորի լեռներ	+ 0 + 4 + 4 + 7
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 +18 + 21
Սյունիքի հովիտներ	+ 8 + 13 +21 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 8 +16 + 19
Արցախ	+ 6 + 9 +16 + 19
Երեւան	+ 8 + 14 +10 + 16

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*